


քարանուծեան մէջ փոքրիկ փոփոխութիւն մը կ'ընէ ոյն բառին վրայ, այսինքն փոխա- նակ Ապակ(ա)քար կոչելու կը կոչէ Ապակ(ե)- քար, որ աւելի քերականական կանոնի ճշ- դութիւն ունի:

Արագոնեան քար

Սոյն բառն սեփականուած է գղ. Arago- niteի. կոչի նաև Արագոնաքար, զոր կազմած է Հ. Քալոնի: Այս հանքին ոյն անուամբ կոչուելուն պատճառն է, Սպանիոյ Արագոն քաղքին մէջ շատ գտնուիլն: Համառոտու- թեան համար լաւագոյն չէ՞ կոչել Արագոն- ակն:

Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ

Շարայարելի



Պ Ր Ո Ւ Ա Տ Ի Կ Է

ՅԱՅՏՆԻ է ամենուն, որ Ս. Գրոց բարձր է վսեմ՝ էջերու մէջ կան երբեմն մօթին և դժուարահասկնալի տողեր, յորոց զմանս լուսաւորած են ուրբ Հարց և այլ զիտոց զրուիւնք և մեկնութիւնք, և շատեր, զեռ իբր անյուծանելի հանգոյցներ կը յոգնեցընեն մեկնչաց մտքերն ու գրիչները. և շատեր եւս, որք թէպէտ յինքեան ըմբռնելի կը համարուին, բայց կը դժուարանան թարգմանութեանց և ձեռագրաց զանազանութեամբ: Այս վերջնոցս կը վերաբերի Յովհաննու Աւետարանին էջ. զիտոյն մէջ՝ մանրամասն պատմութիւն հրաշք մը, որ Աւետարանիւն սիրոյ վրայ ըրած խոյանաց հետ՝ աւանդած հինգ վեց սքանչե- լեաց զլիաւորներէն մին կրնայ համարուիլ, այն է Անդամալուծին բժշկութիւնը: Խնդրոյս վրայ զեղեցիկ պատճառաբանութեամբք և երկարօրէն խօսած է՝ երեւելի և ծանօթ հայա- ղաւն Ab. Martin, ճարտարութեամբ տա- լով՝ Պրորաստիկէ աւագանին մէջ յուզուած ջրերէն աւելի յուզուած խնդիրներու լու- ծումը, և քակելով՝ բնագիտութեան և անկէ աւելի, ձեռագրաց հանած դժուարու-

թեան կապերը: Հմուտ բանասէրը՝ ստիպուած իւր քննադատական քայլերը զօրացնել և ան- շարժ հիման վերայ հաստատել, կը դիմէ շատ ազգերու ձեռագրաց վկայութեան, մերթ անոնց սուրբ Հարց հետ խորհրդակցելու, և մերթ իրենց արարողութիւնքը քննելու: Բայց թէ Թնչ կը ցուցընեն հայ աշխարհի կար- ծիքն և ձեռագիրք՝ նկատմամբ նոյն էջ. զիտոյ՝ երբորդ և չորրորդ տուններուն, որոնք աւելորդ կը համարուին և յետոյ մոծուած, պիտի տեսնենք համառոտ ակնարկ մը տա- լով անոնց վրայ: Դարձեալ պիտի ջա- նանք ցոյց տալ հայ և զիտի Եկեղեցեաց՝ Սուրբ Գրոց թարգմանութեան մէջ ենքաւ գրուած կապը, ինչպէս որ ակնարկեցինք Բագմովէլի սեպտեմբեր պրակին մէջ:

Ամբողջ խնդիրն կը շրջի Աւետարանչին հետեւեալ խօսքերուն վրայ. «**Յ.** Որ ակն ունէին իրոցն յոգեղոյ: **Կ.** Եւ Հրեշտակ Տեսնեմ ըստ Ժամանակի իչսակեր յառաւանճ» և յոգեր զչորսն. և որ նախ ի շարժումն շորցն իչսակեր, բժշկի, ոչ ունելով նշան հիւանդոքեան »: Արդ այս տողերուն մէջ աւագանի գոյութիւնն և հիւանդաց բժշկու- թիւնն՝ ստույգ և յայտնի են, եւս և ըստ պատ- մութեան, և այս մասին ոչ ոք երբեք կը տարակուսի. այլ բուն խնդրոյ նիւթ եղող կէտերն՝ հետեւեալքն են՝ զոր կը ջանան բնա- պաշտը անվաւեր համարել. ա. թէ ջուրն կը յուզուէր ի ձեռն հրեշտակին, և բ. թէ այս սքանչելի յուզմամբ որ և իցէ հիւանդութիւնք կը բուժէին: Արդ կը հարցընենք՝ թէ ինչո՞ւ հին Ժամանակներն եւս այս երկու տուններն տարակուսանաց ենթարկուած են կամ մեր- ժուած. և զարձաք՝ թէ սոյն տողէ՝ չորրորդ աւետարանի մասն են՝ թէ ոչ: Խնդիր մը՝ որուն չէ կարելի վճռական հարուածով մը վերջ տալ, այլ հարկ է հարցընել հնութիւնը, ճշդիւ հետեւելով Ab. Martinի յօդուածին մէջ:

Պրորաստիկէ աւագանն Ս. Հարց շատե- րուն ուշաբլուրութիւնը գրաւած է, քրիստոնէա- կան բարձրագոյն խորհրդոյ մը նմանութիւնն կամ լաւ եւս ստուերն օրինակելով: Առաջին երկու զարեբու լուսութիւնը Տերտուլիանոս նախ կ'ընդհատէ՝ բժշկութեան աւագանը մկր- տութեան հետ համեմատելով, և կը պաշտ-

պանէ Հրեշտակաց առնթրեալայուրիւնը՝ յիշելով զՊրորբատիկէ, Դար մը յետոյ Միւլանու արքեպիսկոպոսը, Ս. Ամբրոսիոս, խորհրդոց վրայ ճառելով, կը տեսնէ անոր ստուերը ի Պրորբատիկէ. զնոյն կը նշմարէ նաեւ վերջնոյս հոգեհիւս քարոզութեանց ցանցով կալանաւորուած արիւկեցիքն, Հիպպոնայ հայրապետը, մինչ Յովհաննու աւետարանը տուն առ տուն կը մեկնէ, Բեթղեհէմի մեծահոգի մենակեցիքն աչքէն ալ չեն վրիպիր այս տունները: Դարերու ընթացից հետ առաջ երթալով՝ կը հանդիպինք Մեծիկ Գրիգորի, երանելոյն Բեղայի եւ այլոց, որոնք տարաւորուի ամենեւին ցոյց չեն տար. եւ յայտնի կը տեսնուի՝ թէ Յովհաննու այս երկու տունները՝ յԱրեւմուտս մասնաւոր վիճի մը նիւթ եղած չէին: Թէպէտ Ս. Կիպրիանոս, Առնոբիոս, Լակտանթիոս ի լատինս, Գ. դարուն մէջ, եւ Ս. Գուստինոս, Ս. Երանոս եւ Սուրբ Հիպպոլիտէս՝ արեւմտեան յոյն մատենադիրք՝ ամենեւին յիշատակութիւն չեն ընել, սակայն այս չէ զարմանալի. որովհետեւ Սուրբ Գրոց նոյն անցքը յինքն ինքեան դժուարութիւն մը չունի՝ մեկնաց ուշադրութիւնը զբաւելու համար: Անցնելով Յոյն Հարց, հարկ է մինչեւ Ե. դար իջնել՝ մեզ ծանօթ տուններուն վրայ վկայութիւն մը գտնելու համար, հասնիլ մինչեւ ցՍ. Ոսկերիան, որ իւր ժամանակին՝ զԱսորիս եւ զԲելոսաստան,

զԱնտիոք եւ զԴոստանդնուպոլիս՝ միանգամայն կը ներկայացնէր: Սուրբ Յովհանն առ նուազն երեք տեղ կը յիշէ մեր այս տունները. նախ ընդդէմ Անոմիանց երկոտասաններով ճառիկ մէջ, զոր խօսած է 387—388 թիւնցները. դարձեալ՝ Թարութեան ճառի մը մէջ, եւ հուսկ ի մեկնութեան չորրորդ աւետարանին: Ձանց կ'ընենք յիշել ուրիշ երկրորդական մատենադիրներ: Ուստի անցնինք Եգիպտոսի՝ Յոյն եւ Ղիպի հարց, յորտեղ կ'ընենք ի Դիոնիսիոս, որ թէպէտ կոյր, սակայն իւր դարուն, մանաւանդ Սուրբ Գրոց խնդիրները ամենէն լաւ տեսնողն էր, որուն չէին դժուարիր երթալ եւ աշակերտիլ Սուրբ Հերոնիմոս եւ Հոուսփինոս. արդ սոյն վարդապետն նմանապէս մկրտութեան պատկերը կը նշմարէ Բեթղեհեցայի տաղանին մէջ, մեկնելով Չաբա, ըրա մարգարէին խօսքը. « Ելլէ ջուր կենդանի յերուսաղէմ »: Դարձեալ՝ զնոյն կը յիշատակեն Ս. Կիրիլը, ամենէն մեծ մատենադիրը՝ զոր բնծայից Աղեբաւորիկոյ յոյն եկեղեցին, յետ Որդիներից, եւ իրեն գրեթէ ժամանակակից՝ Ամմինիոս, որ Ե. դարուն երկրորդ կիսուն մէջ ապրեցաւ (458): Հաւանօրէն Որդիներէն մեկնած պիտի ըլլայ սոյն անցքը, զրելով Յովհաննու աւետարանի վերայ, բայց զժողովարար ձեռնարկիս հասած չէ ինչ՝ ոչ բնագրին եւ ոչ թարգմանութեանց միջոցաւ, ի բաց առեալ տասուերկու տող՝ զորս ձեւ.

1. Հիպպոլիտեայ զբռնածք ծանօթ եղած են մեր նախնեաց. առիթ պիտի ունենանք ուրիշ անգամ խօսելու իրեն վրայ, իւր զբռնածոց հրատարակութեան եւ անոնց վրայ մօտերս յԵւրոպացի բանասիրաց եղած քննադատութեանց մասին:

2. Հայկական թարգմանութեան մէջ կը պակսին սոյն՝ ինչպէս նաեւ նախնեաց չորս ճառերն, ինչպէս կ'ըսուի ի Մատենադարանի Հայկական թարգմանութեանց նախնեաց (էջ 398). — Տպագորդք ի ծանօթութեան. «... Յերկոստաս ճառից յուսնականին (յԱնհապից զրոց) եւթն միայն կան առ մեզ »:

3. Յովհաննու աւետարանի անանուն յոյն մեկնիչ մը, հետեւեալ բացատրութիւնը կու տայ՝ հարցնելով թէ ինչ էր Պրորբատիկէ առաջանը

եւ ինչու համար Պրորբատիկէ կ'անուանուէր: Պէտք է ըսել կը պատասխանէ, թէ սոյն առաջանը տառաւորային մկրտութիւնը կը պատկերէ: Ար համարիմ՝ թէ Պրորբատիկէ կը կոչուէր προβαπτειν բառէն, եւ այս բացատրութիւնը սուրբ Հարց աւանդածին եւ բառին հետ համաձայն է՝ վրան զի ով որ առաջին դիմէր (προβαπτον) յերեման հրեշտակին, հաջիւ թէ ջուրը յուզուէր՝ առաջընթանը կը դառնէր. սոյն պատճառաւ առաջանն ալ Պրորբատիկէ անուանեցին:

4. Սուրբ Կիրիլը հրաշքին համար կրկին նոր պարագաներ կ'աւելցնէ ի մեկնութեան նոյն Աւետարանին, առաջին՝ թէ ոչ մի միայն հրեշտակ՝ այլ բազմութիւն մը կ'իջնէր, երկրորդ՝ թէ ջրոց յուզմանէն, որով ձայն մը կ'ելնէր, ի կ'իմացուէր նոցա ընթերցակայութիւնը:

առգիւններէն ոմանք իրեն կ'ընծայեն. այս տողերը կ'ընդարձակեն անդամալուծին բժշկ-կութեան և մկրտութեան մէջ եղած յարա-բերութիւնը: Արտաքոյ կարգի բան մ'է, որ Որոգիեայ բովանդակ գրուածը կորսուի, և միայն այս աննշան անցքը պահուի: Ս. Կիրեղ և Ամմոնիոս կը հասցընեն զմեզ՝ Ալեքսան-դրեայ Յոյն Եկեղեցւոյն գրեթէ վերջը, իրենց մէ ետքը կը սկսի կոռույ և բաժանմանց այն երկար միջոցը, զոր կարելի է նմանցը-նել տաքնապալից օրհասի մը, որ վերջացաւ մահաւամբ՝ նման ամէն հոգեմարքի: Յոյն եկեղեցւոյն յաջորդեց զփոտի, ուղղափառու-թեան՝ յաջորդեցին Յակոբիկ Միաբնակը:

Ինչ կարծեք ունի արդեօք Ղփտի եկեղեցին այս տուններուն վաւերականութեան վրայ: — Գուցէ կարելի ըլլար այո՞մ ծանօթանալ, իւր մի քանի մեկնչաց միջոցաւ, սակայն դժուա-րագիւտ են անոնք և կարելի չեղաւ ցայսօր ձեռք բերել զէթ մէկ հատը. սակայն ոչ թէ առանձնական հեղինակաց վկայութեամբ գա-ղափար մը պիտի կազմե՞ք նորա կարծեաց մասին, այլ ուրիշ փաստերու օգնութեամբ: Բայց ստոյգ է՝ թէ ի սկզբան Ղփտի եկեղե-ցին ճանչցած է մեր այս տունները. վասն զի չորրորդ և հինգերորդ դարերուն՝ երբ զեռ Ղփտի եկեղեցին սկզբնական վիճակի մէջ էր, Ալեքսանդրիոյ Յոյն եկեղեցին արդէն իսկ կը ճանչնար ի վաղուց և կ'ընդունէր զայնս:

Ասորի Եկեղեցւոյ մէջ Ս. Եփրեմ է, որ ամենէն առաջ յայտնի յիշատակութիւն կ'ընէ՝ իւր Տատիսնու Համաձայնութեանց մեկնու-թեան յօդ զլսողն մէջ, Զի յիշեր 1—4 տու-ները, մեկնութիւնը Տերորդ տունէն կ'սկսի, սակայն տարակուսի և ոչ ստուեր անգամ

կայ՝ թէ սուրբ վարդապետ ճանչցած չըլլայ չորրորդ տունը. ահա իւր խօսից հայկական թարգմանութիւնը (Տպ. Վենետիկ, 1836. Հտ. Բ. էջ 134). « Ոչ գոյ իմ, ասէ, պա-հակ՝ որ իշուցանէ զեռ. այլ մինչեւ ես անդ հանդիպեմ՝ թէ շարժեցայց, այլ եւս վաղա-գոյն իշանէ քան զիս. և զերեսուն և զութ ամ ոչ գտաւ նմա որ: Յամօթ լիցին Հրեայքն՝ որ ոչ հաւատան՝ եթէ մկրտութիւն զմեզս թողու. զի եթէ հաւատան նոքա՝ եթէ հրեշ-տակն՝ ի ջուրն Երուսէայ բռնկէր զՀեռանդան, իրջափ եւս առաւել տէր հրեշտակացն ասիտաւ, կացուցանէ զսպիտակուցս մկրտութեամբն ու: Նման մկայութեանց կը հանդիպինք Ասորի եկեղեցւոյ մեծ ճառարսօսին՝ Յակոբայ Սրեմեցւոյ (451—521) և այլոց քով, ինչպէս են Ռապ-պան Ղազար Պէթ Գանատասայ, Ը. դարու հեղինակ, որ հետեւած է Ոսկեբերանի. Ա. պուլֆարան Պէն—Աթթաիպ, նեստորական եկեղեցւոյ մեծանուն մեկնիչը և զլսաւոր մատուցարիւններն մին, իշուո—հատ եպիս-կոպոս Հատէտի, նոյնպէս մեկնիչ նեստո-րական, և երկոտասաներորդ դարուն մէջ Գիոնիսիոս Բար—Սայրափ՝ եպիսկոպոս Ամդայ († 1171), և Գրիգոր Բար—Հերբէս, Մեւ-րապոլիտ Թէքրիգի:

Արդ հարկ է իշնել մինչեւ ցԳրիգոր Բար—Հերբէս (1226—1286), ծանօթանալու հա-մար՝ թէ անտարանի սոյն տունները տարա-կուսի ենթակայ եղած էին կամ թէ ե՞ն: Ահա նոյն Յակոբիկ հեղինակին հետաքը-րական և կարեւոր մեկնութիւնը. « Տօն էր Հրեից » (Յովհ. Ե. 1) այսինքն Պնտակոս սէի: Աւագան մը, որ Երբայիցերէն Բէթ-հեզաւ կը կոչուի, ուսմով ճնշուած դ ով, այն է տուն նախատանաց, վասն զի հոն

1. Բերնեզայ անուան՝ Ասորուց մէջ այս կրկէն կերպով ընթերցումը կը պարզէ մեզ զէպը մը, զոր նկատած ենք նոյնպէս արաբե-րէն լեզուի մէջ: Արաբացի մեկնիչը և Թարգ-մանիչը երբեմն կը կարդան **آل حواري** առաւել ընդհատութեան կամ նախատանաց, նշանակելով չ զերը վրան կէտով մը և, և եր-

բեմն ընդհակառակն կը կարդան **بيت الرحمة** տուն ողորմութեան: Որովհետեւ Արաբացիք՝ կե-տերը դերբաւ զանց կ'ընեն ի գրութեան կամ չափազանց ապատուութեամբ կը ցանեն, հետեա-պէս զտուարին չէ՝ որ ողորմութեան տունը ի տուն նախատանաց փոխուած ըլլայ. երկու նշանակութիւնք իրարմէ կէտով մը միայն գա-նազանուելուն համար:

զոհերը կը լուանային, արեհէ և աղտեղու-
թեհնէ սրբելով. ոմանք անձայն դ ով կը
հնչեն, որ ըսել է տուն ողորմութեան, կոյ-
րերու և կաղերու հոն առողջութիւն գտնե-
լուն համար, սակայն այս կարծիքը ճիշդ
չէ: Յունարէնի մէջ (Փիլոքսէն—Հերակլեան
թարգմանութիւն) կը դրուի *περὸ βατα*, այն
է տուն՝ ուր կը խմբին հօտք (*περὸ βατα*):
Բեթժհեզայի տեղ (Յոյն) կը գնէ դարձեալ
Բեթ—գաթօ: — «Հրեշտակ իշակեր ըստ
ժամանակի յառազանն»: — Ոմանք կը
համարեն թէ այս տունը Աւետարանի յա-
տուի չէ: — «Եւ որ նախ ի շարժումն
չորցնէ իշակեր»... — Այսպիսի ինչ կը
պատահէր, որպէս զի իմանան որ՝ եթէ այն
աւազանով, ուր զոհերը մաքրուած էին, հի-
ւանդք կը բժշկուէին, որչափ եւս առաւել
նոյն զոհերով պիտի բժշկուէին: Կ'ըսեն՝ թէ
աւազանին բժշկութիւն կատարելու պատ-
ճառը, Եսայայի մարգարէին նոյն տեղ թա-
ղուած ըլլալն է:

Բար—Հերբէռս այլոց հանած ազմուկը
միայն կը պատմէ, որուն ինքն ալ կարեւո-
րութիւն չի տար. վասն զի նոյն իսկ անընդ-
ունելի տուններ կը մեկնէ: Ըստ պատմու-
թեան խօսելով, առանց ձեռագրերը յիշելու,
մեր խնդրոյն նկատմամբ՝ միայն զայս մեր
առջեւ կը գնէ հին քրիստոնէութիւնը: Հարկ
էր յերեքտասաներորդ դար՝ Բար—Հերբէռսի
ժամանակը իջնել, աւետարանի այս անցից
վրայ եղած տարակուսանաց նկատմամբ խօսող
մատենագիր մը գտնելու համար:

Տեսնենք ինչ էր Հայոց կարծիքը:

1. Պորապիկէ աւազանին անունը այլ և այլ
ձևերով գրուած կը տեսնուի առ սուրբ Հարօ:
Տերառաղիմանս «Betsaida» կ'անուանէ: Ս. Հե-
րանիմոս «Bethesda»։ Ս. Ռեկերբան կ'ըսէ. դ
λεγομένη Ἐβραϊστὶ Βηθεσδα. եբրայեցերէն կրկին
կերպով կը գրուի՝ որով և տարբեր նշանակու-
թիւններ կ'առնուի, (ܒܬܝܬܐ ܬܝܒ) տոնն ողորմոս-
թեան, (ܒܬܝܬܐ ܬܝܒ) տոնն յոսպեաց: Ձեն
Bethsaida գործածուած է Վուլկադայի մէջ.
Իսկ *περὸ βατα* կամ Պորապիկէ՝ Թարգմանու-
թիւնն է եբրայեցերէն անուան: Ս. Եփրեմ կը
գործածէ Սելուվամ, ուսկից է հայերէն Թարգ-

ի Հայաստան՝ գրականութիւնն հինգե-
ւորդ դարուն սկիզբը զարգացումն կ'առնու-
իւր առաջին արդիւնքն՝ Թարգմանութիւններ
միայն են, եթէ ի բաց տուններ Եղիշկայ
կողբացւոյ (Եղծ աղանգոց) գիրքը, Եղիշկի
և Մովսիսի Խորենացւոյ պատմութիւնքը:
Թարգմանութիւնք սուրբ Գրոց, Թարգմանու-
թիւնք Յոյն և Ասորի Հարց. ասոնք են քրիս-
տոնեայ Հայաստանի առաջին գրական եր-
կերն:

Որով չենք կրնար յուսալ՝ շատ մը վկայու-
թեանց հանդիպելու Հայ մատենագիրք ըսի.
որովհետեւ հայ պատմիչներն նպատակ չու-
նէին՝ Աստուածաշնչի խնդիր վերցնող կտերը
պարզելու, կամ Աւետարանը մեկնելու: Ջար-
տողութիւններ են, որոց երբեմն կը հան-
դիպինք իրենց զրոց մէջ, եթէ Ս. Գրոց քանի
մը անցից յիշատակութիւն կ'ընեն: Յայտնի
է՝ թէ Հայք հինգերորդ դարէն սկսեալ ճանչ-
ցան, զեթ Թարգմանութեանց ձեռքը, Յով-
հաննու աւետարանին Եւր գլխուն՝ երրորդ և
չորրորդ տունները:

Ստոյգ է՝ թէ մէկն Հայ մատենագիրք կը
միտարանին 420 և 450 տարիներու մէջ
գնելու՝ սուրբ Յովհան Ոսկեբերանի, սուրբ
Եփրեմի և սուրբ Կիրեղ Աղեքսանդրացւոյ՝
հայկական Թարգմանութիւնները, զորս մին-
չեւ ցայսօր մեր ձեռաց մէջ ունինք: Դար-
ձեալ թէ, ժամանակ պիտի չաւնենային յա-
ջորդ յիսուն տարիներուն մէջ սոյն Թարգ-
մանութիւնները կատարելու, որովհետեւ Հա-
յաստան նոյն ատենները ասպարէլ մը դար-
ձաւ անդադար պատերազմներու և ահաւոր

մահութիւնն կ'ըսէ «Ըուրքն Տիւրուհեայ»։ Իսկ
աւազանը հնգանկիւն ձև ունէր՝ որուն շուրջ
կ'երկնային հինգ որահներ, հիւսնդաց բազ-
մութիւնը ընդունելու համար:

2. Հեռեկալ առջերով հայապէս բնառեղն
լոկ ակնարկ մի կու տայ հինգերորդ դարուն
վրայ, յետոյ ամբողջ գրականութեան վրայ խօ-
սելու առիթ ունենալուն համար. որուն մէջ մե-
ծապէս ձեռնառւ եղած է իրեն Հ. Գարեգին Վ.
Ջարգահնաւեան, զոր ինքն իսկ հմուտ գաղ-
ղիացի հեղինակն, զանց չընէր շնորհակալու-
թեամբ յիշատակել իւր զրոց մէջ:

աւերմանց, իսկ հարիւր տարի վերջ, Յուսաց և Հայոց մէջ մտած նախանձորգութիւնը արգելք պիտի բլլար նոյն թարգմանութեանց, կամ պիտի խափանէր կատարելու զայն գեւրազանց կերպով մը։ Արդ միայն մէկ ժաւանակ կը մնայ, յորում գրական աշխատութիւնք մեծ հռանդեամբ յառաջ մղուեցան, այն է հինգերորդ դարուն երկրորդ քառորդն։

Ա. Նոյն ժամանակ թարգմանեցին Սուրբ Եփրեմի գործերը, ի մասնաւորի իւր Տաւտիանոսի Համաձայնութեան (Διά τῶς ὁμοφωνίας) վրայ մեկնութիւնը¹։ Դարձեալ՝ նոյն ատեն թարգմանուեցան գրեթէ բոլորական սուրբ Ոսկեբերանի գրքերը, և գլխաւորապէս չորրորդ Աւետարանին վրայ բոլոր մեկնութիւնը (Չ)։

Բ. Զառն՝ յորում Կոստանդնուպոլսոյ մեծ հայրապետը՝ Յովհաննու Ե գլխուն առաջին տունները կը մեկնէ, հայկական թարգմանութեան մէջ 36 թիւն չունի, այլ 35։ Նոյն ճառին մէջ՝ սուրբ Ոսկեբերան յառաջ կը վարէ հինգերորդ գլխոյն մեկնութիւնը, 6 երբորդ տունէն սկսեալ, որ յունականին մէջ 37 երրորդ ճառին սկզբնաւորութիւնը կը կազմէ։ Սոյն զանազանութիւնը ի մէջ այժմեան յոյն և հայկական տպագրութեանց, նոր չէ. ի հնուց Յունաց մէջ այնպէս է. վասն զի հին հեղինակաց՝ սուրբ Ոսկեբերանի մեկնութեան ըրած կոչմանց և այժմեան տպագրութեանց մէջ՝ միշտ թուոյ մը տարբերութիւնը եղած է։ Բայց դառնալով մեր նիւթս, ահա ինչ որ կը կարդանք սուրբ Ոսկեբերանի հայերէն թարգմանութեան մէջ. «Նոյնպէս և յուս թիւնակին եղեւ. զի հրեշտակ իրանէր և յուս զէր զշուրսն և գնէր ի նա զօրութիւն բժշկ-

« կուլեան. զի ուսանիցին հրեայքն՝ եթէ որս
« չափ եւս առաւել տէրն հրեշտակաց զաւս
« մենայն ինչ՝ որ ապականէ զմարմին և
« զհոգի՝ կարող է բժշկել։ Այլ որպէս անդ
« ոչ վայրապար բնութիւն ջուրցն բժշկէր.
« և ոչ յարժամ այն լինէր, բայց ի մերս
« ձենալ զօրութեան հրեշտակին. սոյնպէս
« և առ մեզ ոչ եթէ վայրապար ջուրն ներս
« գործէ, այլ յարժամ բնորունի զշնորհս Հոգւ
« ւոյն Սրբոյ, յայնժամ լուծանէ զամենայն
« զմեզս »։

Ստոյգ է արդ՝ թէ Հայք ունեցած են իւրեանց կրօնական գրականութեան մէջ այնպիսի գրքեր, որ իրենց խօսքն յամենա՝ Բէթհեղզայի աւագանի Լուի իշխող հրեշտակին և ամեն տեսակ հիւանդութեամբ վարակեալ ամբոխի մը վրայ, որք պատեհ ժամուն կը սպասէին, փրկարար ջրոց մէջ նետուելու։ Սուրբ Ոսկեբերանի թարգմանութիւնը՝ միայն ուսումնական տեսակետով և գրադարաններ սիրողներու համար եղած չէր, այլ զլիակաւորապէս զուտ կրօնական վախճանով մը, հաւատացեալոց շինութեան և կրթութեան համար։ Եւ գրեթէ ստոյգ է՝ թէ Կոստանդնուպոլսոյ հայրապետին ճառերը կը գործառնէին եկեղեցական պաշտամանց մէջ. կը կարդացուէին բեմերէ՝ յետ եղանակելու զԱւետարանն։ Ս. Ոսկեբերան գրեթէ միշտ երկուքի կը բաժնէ իւր ճառերը. առաջինը՝ կ'ուսուցանէ, երկրորդը՝ կը վառէ զհոգին եռանդուն յորդորմամբ մը, որով հայերենի մէջ կոչուած է « Յորդորակ », բացատրութիւն մը՝ զոր միայն իտալերէն « Fervorino » բառը լաւ կրնայ պարզել։ Սովորաբար « Յոր-

1. Հայք ամենէն առաջ Ասորի հեղինակներ թարգմանել սկսած են, և այն՝ 420էն առաջ։ Արդ Ասորի զրաւց մէջ երկուք միայն կային՝ որ հռչակ օւնէին, Ս. Եփրեմ և Ափրատա։ Եւ այս երկուքին միայն գործերը հայերէն լեզուով կան։ Ասոր համար է՝ որ ամէն հաւանականութիւն կայ կարծելու, թէ այս թարգմանութիւնք մինչեւ 410 կամ 415 թուականին եղին (Չ)։— Ասորի հեղինակաց հայերէն թարգմանութիւնքը բոլորովն անեսա շանցան ի Կոստանդնուպոլսոյ թէոքոս փոքր կը մեղադրէր զսուրբ Սահակ՝ Ը-

մելով. « յԱսորեաց ոմանց խնդրէր զմաստոյց գիւտս » և Ատաիկոս. « Առաւել ընդ այս զարմանամք. եթէ զխորդ թողիւր զաղբերն եկեղեցւոյ զհայր մեր սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մարաքաղաքի, այլ որովաւ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նմանէ վարդապետեալ ուսանի, ուստի և Ոսկի բերան կոչեցին զնա. Եւ ձեր զանց ցնովաւ արարեալ՝ կ'անցայք ի սահանաւ կան ջրանց զաբախալ ծառաւայն՝ յաղեցուցանել... »։ Մովս. Խորեն. Գ. 44։

գորակը» կը բաժնուի ճառէն նոյն իսկ նիւթական նշանով մը, ինչպէս որ է մեր առջեւ եղած Կոստանդնուպոլսոյ տպագրութեան մէջ՝ 355երորդ ճառին «Յորդորակը», յոյն բնագրին 2 թիւն ի միասին առնելով, բաժնուած է նախընթացէն մեծ խաչով մը Կ, և երկու տողերով՝ որոց մէջ գրուած է «Յորդորակ» բառը:

Արդ՝ կանոնաւորապէս քննելով հայ, ինչպէս նաեւ հին քրիստոնեայ գրականութիւնը, ապահովապէս դեռ ուրիշ շատ վկայութիւններ պիտի գտնուին՝ ի նպաստ գոյութեան Յովհաննու Ե պիսոյն 3—4 տուններուն. սակայն մինչեւ ցարդ բերածնիս շատ իսկ են ապացուցանելու թէ նոյն անցքը բնականօրակէ քրիստոնեայ հասարակութենէ ընդունուած էր: Յաջորդ յօդուածն դեռ աւելի պիտի պարզէ ինչպիսիք: Ա. Գ.

Շարայարեղի



Կ Ե Ե Ս Ս Ա Գ Ր Ո Ւ Կ Ա Լ

Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ղ Ա Յ Ո Ւ Ն

Ե Ա Գ Ո Ւ Մ Ե Ե Ի Կ Ե Ե Ս Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Լ

(Շար. տես յէջ 365)

ԱՅ ՄԱՄԱՍԻ երկրագործական վարժարանն՝ տեղւոյն հակառողջապահիկ ըլլալուն՝ նախ Այ Ստեփանոս և ապա խառնուող փոխադրուել վերջ 1862ին առնենք իրականութեամբ: Այս առնենք կը խորհուրդ Գաղաթիւի մօտ Գորպաղըլը—Տըրէ անուանեալ կայսերական ազարակին մէջ բանալ մի երկրագործական վարժարան: Աղաթոն էֆ. ի յանձնուեցաւ այդ խնդրոյ ուսումնասիրութիւնն և վարժարանի կանոնադրի ու ծրագրի պատրաստութիւնն: Աղաթոն էֆ. կատարեց կառավարութեան յանձնարարու-

թիւնն, սակայն ապա ինչ ինչ պարագայից բերմամբ այդ մտադրեալ վարժարանի բացումն տեղի չունեցաւ: Այս աշխատութեան ֆրանսերէն օրինակն կը տեսնամք իւր թուղթերուն մէջ, որոյ խորագիրն է.

Projet de loi tendant à établir une école d'agriculture dans la ferme de Sa Majesté Impériale située à Kourbaghly Dérée, près Kadi-keuy.

Աղաթոն էֆ. 1863ի Կ. Պոլսոյ ցուցահանդէսին մէջ մեծ դեր ունեցած է իբր անդամ և քարտուղար ցուցահանդէսի կարգադիր յանձնախմբին, որոյ այլ անդամք էին, Մուսթաֆա փաշա՝ հասարակաց կրթութեան նախարար, Քիւսմիլ պէյ, Սերափէր էֆ. Նիսալիմ պէյ, Ալմի պէյ: Աղաթոն էֆ. պատրաստած է ցուցահանդէսի ծրագիրն և այլ աշխատութիւններն:

Գրիգոր Աղաթոն 1864ին օսմ. հեռագրութեան ընդհանուր տնօրէն կը կոչուի, և յաջորդ տարին Փարիզ կը գրկուի իբր օսմ. պատուիրակ Փարիզու հեռագրական համաժողովին (congrès): Այս անգամ Փարիզ գտնուելուն կ'անդամակցի «Ժողովրդական տնտեսագիտութեան զործնական ուսումնասիրութեանց միջազգային ընկերութեան», յորում խիստ պատկանելի դերք մը կ'ունենայ: Աղաթոն էֆ. Փարիզէ վերադարձին՝ կը հաստատուի Ե. Պոլսոյ տեղական թղթատարութիւնն: Սոյն առնենք իրեն կը յանձնուի նաեւ հասարակ տնտեսագիտութեան, զոր քանի մը ամիսներ միայն վարեց: Այս առթիւ ստացաւ ռաչիկ Էվիէի աստիճանն:

1866ին օսմ. թղթատարութեան ընդհանուր տնօրէնութիւնն ալ իրեն կը յանձնուի. նոյն տարին հեռագրական միջազգային համաժողովոյն՝ օսմ. կառավարութեան կողմանէ պատուիրակ կը կարգուի: Այս ժողովոյ զիտւոր զբաղումն էր ընդհանուր սակագնոց խընդիրն: Աղաթոն էֆ. մեծ համակրութիւն կը վստահի այլ պատուիրակաց մօտ, համաժողովոյն մասնակցող կառավարութիւնը իրենց շքանշաններով կը պատուեն զայն, որպէս Ռուսիա՝ սուրբ Սիմանիսի կարգին Բ. աստիճանի շքադրամ յղեց (1866 թ հոկտ.